Digitally signed by ALAVERDYAN SOFYA 5802630256
Date: 2024.03.13 12:10:37 AMT

Ուսումնական նախագծային աշխատանքի պլանավորման ձևաթուղթ.
Հայկավանի միջնակարգ դպրոց
Ուսումնական նախագծի ղեկավար՝ Շ. Սիմոնյան

Թեմա՝ Արմավիրի մարզում հանդիպող բուժիչ բուսատեսակների ուսումնասիրումը	
Առարկա(ներ)՝	Կենսաբանություն
Դասարան՝	7-րդ
Ուսումնական նախագծի անվանում՝	Արմավիրի մարզում հանդիպող բուժիչ բուսատեսակների ուսումնասիրումը:
Ուսումնական տարի, կիսամյակ	II կիսամյակ 2024թ
Տևողություն՝	5 շաբաթ
Նախատեսված ժամաքանակ	5 ժամ
Վերջնաժամկետ	Փետրվարի 14-ից Մարտի 13-ը
Ուսումնական նախագծի իրականացման փուլեր	1. Թեմայի ընտրություն: Հիմնախնդրի ձևակերպում 2.Հիմնական հարցերի դուրս բերում: Աղբյուրների ընտրություն: Հետազոտություն: 3. Թիմերի հետ անհատական հանդիպումներ: Ձևավորող գնահատման փուլ 1 4. Ստացված արդյունքների միջանկյալ քննարկում, համապատասխան որոշումների կայացում: Սահիկահանդեսի պատրաստում: 5. Սահիկահանդեսի ցուցադրում: Հանրային ներկայացում: Գնահատում:
Տեսակը՝	անհատական թիմային
Ձևաչափը՝	ներառարկայական ☐միջառարկայական

Տիպը՝	Իրական կյանքին վերաբերող խնդիրներին միտված նախագծեր։ Դիրքորոշում ներկայացնող և պաշտպանող նախագծեր։ Չևաչափերի, մոտեցումների նոր լուծումներ առաջարկող նախագծեր։ Վերացական/փիլիսոփայական հարցեր քննող նախագծեր։ Բուն հետազոտական նախագծեր։

Ուսումնական նախագծի նպատակը

Զևավորել սովորողների մոտ սերը դեպի բնություն։
Ընդլայնել բույսերի բազմազանության վերաբերյալ պատկերացումները։
Զևավորել բույսերի հիմնական կարգաբանական խմբերի տարբերիչ առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիք։
Սովորողների մոտ ձևավորել ընկերների կարծիքը և ցանկությունները հաշվի առնելու պատրաստակամություն, ընկերներին օգնելու կարողություն։

Ուսումնական նախագծի վերջնարդյունքները

Սովորողը կկարողանա՝
Տարբերել Արմավիրի մարզի դեղաբույսերը։
Տարբերակել բույսերի հիմնական կարգաբանական խմբերի ներկայացուցիչներին՝ ըստ արտաքին կառուցվածքի և կենսագործունեության բնորոշ առանձնահատկությունների։
Մասնակցի բնապահպանական միջոցառումների պլանավորմանը եւ իրականացմանը։
Նկարագրի դեղաբույսերի կիրառությունը առօրյա կյանքում և հասկանա,որ ալկալոիդները, եթերայուղերը, վիտամինները շատ կան դեղաբույսերում, որոնք առողջության անբաժանելի մասնիկն են։
Գնահատի կայուն զարգացման ապահովման հնարավորությունները տարբեր ռեսուրսների կառավարման եւ պլանավորված օգտագործման միջոցով։

Հիմնախնդիրը կամ մարտահրավերային հարցը

Արմավիրի մարզում հանդիպող բուժիչ բուսատեսակների ուսումնասիրության բացակայությունը մեր համայնքում։

Ուղղորդող հարցեր

1. Ինչպիսի դեղաբույսեր կան Արմավիրի մարզում:
2. Ինչպես պետք է հավաքեն և չորացնեն այդ դեղաբույսերը:
3. Այդ դեղաբույսերը ինչպիսի հիվանդություններ են բուժում:
4. Դեղաբույսերի տարածվածությունը:
5. Ինչո՞վ է կարեւոր մեր ընտրած հիմնախնդիրը աշխարհում եւ մեր համայնքում:

Կարողություններ, որոնք կզարգանան այս նախագծի ընթացքում

Սովորել սովորելու կարողություն

Ինքնաճանաչողական և սոցիալական կարողություն

Տնտեսական կարողություն

Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողություն

Լեզվական գրագիտություն և կարողություն

Մշակութային կարողություն

Ժողովրդավարական և քաղաքացիական կարողություն

Թվային և մեդիա կարողություն

Հանրակրթության պետական չափորոշիչ, 2021, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

Ուսումնական նախագծի նկարագիրը

Ուսումնական նախագծի հիմնախնդրի/մարտահրավերային հարցի ձևակերպում:
Ուսուցիչը ներկայացնում է աշակերտներին նախագծային աշխատանքի իրականացման ընթացքը՝ 4 փուլերը, նկարագրում է հնարավոր դերերի պատասխանատվությունը և անելիքների շրջանակը:
Սովորողներին տրամադրվում է ծրագրային թեմաներից դուրս բերված հիմնախնդիրների ցանկը: Առաջարկվում է ընտրել դրանցից մեկը: Խմբում կատարում ենք աշխատանքի բաժանում, ըստ նախատեսված առաջադրանքների:
Աշխատանք տեղեկատվական աղբյուրների հետ,
Հիմնախնդրի կարևորության և տարածվածության ուսումնասիրություն և հիմնավորում:
Կատարված աշխատանքների միջանկյալ քննարկումներ, ուղղորդում:
Հարցումներ, հարցազրույցների վարում, ձայնագրություններ, նկարներ՝ համայնքում բնակվող քաղաքացիների և պատկան մարմինների, մասնագետների, մանկավարժների, շահագրգիռ կառույցների հետ:
Ստացված տեղեկատվության ամփոփում, վերլուծություն, դիագրամների, պատկերների, վիճակագրական աղյուսակի կազմում:
Միջանկյալ քննարկումներ, արդյունքների ներկայացում:
Հիմնախնդրի լուծմանն ուղղված գործողությունների ծրագրի առաջարկ /տեսանյութի պատրաստում/:
Սահիկաշարի պատրաստում:

Խմբերի ինքնուրույն հետազոտական աշխատանք:
Ուսուցիչը տրամադրում է ժամանակացույցը:

Ուսումնական նախագծի հիմնախնդրի /մարտահրավերային հարցի ձևակերպում/ Խմբերը ստանում են առաջադրանքներ, իսկ հնարավորության դեպքում ինքնուրույն ձևակերպում են իրենց առաջադրանքը Առաջադրանքի հիման վրա ցանկալի է, որ խմբերը կազմեն իրենց գործողությունների ծրագիրը և ժամանակացույցը՝ ելնելով ուսուցչի առաջադրած ժամանակից:
Ուսուցիչը հետևում է նաև, որպեսզի յուրաքանչյուր խմբում ընդգրկվեն տարբեր կարողություններ և կրթական կարիքներ ունեցող սովորողներ, բայց միաժամանակ հաշվի առնվի սովորողների հետաքրքրություններն ու նախընտրությունները Ցանկալի է, որ խմբերը լինեն տարասեռ, հնարավորինս պահպանվի տղաների և աղջիկների համամասնությունը, որպեսզի համակարգված ներկայացնեն իրենց իրականացրած հետազոտական աշխատանքը՝ որպես մեկ ամբողջություն:

Արդյունքների միջանկյալ ամփոփում:

Ուսումնական նախագծի իրականացման ընթացքում արդյունքների միջանկյալ ամփոփումը առնվազն երկու նպատակի է ծառայում՝ գնահատել մինչ այդ պահը արվածը և ձեռք բերվածը, ինչպես նաև նախապատրաստվել նախագծի ամփոփմանը:
1. Խմբերին հանձնարարվում է ամփոփել կատարած աշխատանքը, ընտրել ստացած արդյունքները վերլուծելու և ներկայացնելու որևէ հարմար եղանակ
2. Ուսուցիչն օգնում է աշխատանքային խմբերին համոզվել ստացված փաստական տեղեկության արժանահավատության մասին, տարանջատել տեղեկատվությունը

ապատեղեկատվությունից, փաստը՝ կարծիքից։

3. Խմբերին հանձնարարվում է ներկայացնել կատարված աշխատանքի միջանկյալ արդյունքերը։ Դա կարող է ունենալ սահիկահանդեսի, կամ այլ արտադրանքի (պրոդուկտի՝ չորացված բուսատեսակների, սերմերի) տեսքով։ Միաժամանակ ցանկալի է, որ սովորողները պատրաստվեն այդ արդյունքների բանավոր հակիճ ներկայացմանը։ Միջանկյալ արդյունքների ներկայացմանը խրախուսելի է հրավիրել դպրոցի այլ ուսուցիչներ, ծնողների, այլ հետաքրքրված մեծահասակների։ Վեջիններիս դիտարկումներն ու խորհուրդները կնպաստեն սովորողներին ինքնավստահության, գործունության բարձրացմանը, աշխատանքի բարելավմանը։

Ամփոփում և հանրային ներկայացում .

Սովորողները ամփոփում են կատարված աշխատանքի արդյունքները, վերջնական համադրում, խմբավորում ստացված տեղեկություններն ու տվյալները։
Սովորողները որոշում եմ հիմնախնդրի (**Արմավիրի մարզում հանդիպող բուժիչ բուսատեսակների ուսումնասիրության բացակայությունը մեր համայնքում**) լուծման առաջարկը՝ Արմավիրի մարզում հանդիպող բուժիչ բուսատեսակները իրենց կողմից հավաքված և չորացված արտադրական պրոդուկտի, սահիկահանդեսի (որպես պրոդուկտ) միջոցով ներկայացնել։ Առաջարկը ամփոփվելու է հիմնախնդրի լուծմանը միտված գործողությունների ցանկով պատրաստվում են դրա ներկայացման հանրային ելույթին։ Որոշել են օրինակ՝ ներկայացումն անել կենսաբանության լաբորատորիայում, համապատասխան հրավերները ուղարկել դպրոցի տնօրինությանը, հրավիրել նաև դպրոցի ծնողական խորհրդին։ Հանրային ներկայացումը առավել վիզուալ և տպավորիչ դարձնելու համար, որոշել են սահիկահանդեսի (որպես պրոդուկտ) միջոցով ներկայացնել իրենց կատարած աշխատանքը, իսկ նախապես չորացված բուսատեսակները՝ ավելուկը, դաղձը, երիցուկը և խատուտիկը ներկայացնել համապատասխան փաթեթավորմամբ։

Միջառարկայական կապեր		
հայոց լեզու	քիմիա	աշխարհագրություն
հայ գրականություն	հայոց պատմություն	երաժշտություն
օտար լեզուներ	կենսաբանություն	կերպարվեստ

մաթեմատիկա	բնագիտություն	ինֆորմատիկա
հասարակագիտություն	ֆիզիկա	պար
համաշխարհային պատմություն	մարմնակրթություն	բեմարվեստ

Ուսումնանան նախագծի արտադրանքի/պրոդուկտի ներկայացման տեսակներ	
Ամսագիր կամ թերթ,պաստառ	Վեբ-կայք
Տեղեկատվական թերթիկ	Սահիկաշար, տեղարդում դպրոցի/համայնքի կայքէջում
Տեսանյութ	Սոցիալական գովազդ, հոլովակ
Ձայնվածք (փոդքասթ)	Բուկլետ
Դասընթացներ	Կլոր սեղան քննարկում
Ցուցահանդես	Ֆլեշմոբ/ տարածում կայքերում
Առաջարկ պատկան մարմիններին	Նամակ/ ուղերձ

Հետազոտության աղբյուրներ

«Արմավիրի մարզում հանդիպող բուժիչ բուսատեսակների ուսումնասիրումը» թեմայի հիմնախնդրի պարզաբանման համար համապատասխան աղբյուրներ կարող են լինել՝

1. Կայքերի տրամադրում:
2. ՈՒղորդում այգիներ որտեղից կարելի է հավաքել դեղաբույսերը:
3. Դեղաբույսերի ճիշտ հավաքում, ճիշտ չորացում:

Ժուկովսկի Պ.Մ.- Բուսաբանություն.1991 Հայաստանի բույսերի Կարմիր գիրք
Բուսաբանություն : Դասագիրք / Վ.Գ. Խրժանովսկի, Ս.Ֆ. Պոնոմարեն
Հայաստանի դեղաբույսերը, Ա. Թորոսյան, «Հայաստան» հրատարալկություն, Երևան-1983

Գնահատում

Ամփոփիչ գնահատման բաղադրիչները՝

1. Հիմնախնդրի ներկայացում
2. Բնապահպանական ազդեցությունը բնության եւ մարդկանց վրա
3. Իրատեսական լուծումների նկարագիր եւ հիմնավորում

4. Հանրային ներկայացում
5. Համագործակցություն

Շաբաթ՝	I	II	III	IV	V
1. Թեմայի ընտրություն: Հիմնախնդրի ձևակերպում	14.02.24				
2.Հիմնական հարցերի դուրս բերում: Աղբյուրների ընտրություն: Հետազոտություն: և աշխատանքի բաժանում:		21.02.24			
3. Թիմերի հետ անհատական հանդիպումներ: Ձևավորող գնահատման փուլ 1			28.02.24		
Ստացված արդյունքների միջանկյալ քննարկում, համապատասխան որոշումների կայացում: Սահիկահանդեսի պատրաստում:				06.03.24	
Սահիկահանդեսի ցուցադրում: Հանրային ներկայացում: Գնահատում					13.03.24